Հայաստան, ք. Երևան 0010, Տիգրան Մեծի 4
4 Tigran Mets str., Yerevan 0010, Armenia
+374 60 464501, 464502
Info@ekeng.am
www.ekeng.am

«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ տնօրեն
պարոն Ս. Ասատրյանին
Ք.Երևան, Նալբանդյան փող. 48/1, 5-րդ հարկ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահ, Վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ծ. Սողոմոնյանի և «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊ ընկերություն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ս. Ասատրյանի, 2019 թվականի մարտի 5-ին կնքել են ՆԷԿԵՆԳ-ԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով ««ԷԿԵՆԳ» ՓԲԸ կարիքների համար ֆինանսական աուդիտի ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիր» (այսուհետ՝ Պայմանագիր), որով Կատարողը ստանձնում է ֆինանսական աուդիտի ծառայությունների մատուցման պարտավորություն՝ Համաձայն Պայմանագրի Հավելված 1-ով ներկայացված տեխնիկական բնութագրի:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն Կատարողը պարտավորվել է Պայմանագրին կից Հավելված 1-ով սահմանված ժամկետներում մատուցել նույն հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն): Սակայն Կատարողի կողմից Պայմանագրի 3.1 հավելվածով Պատվիրատուին հանձնված Պայմանագրի արդյունքը չի համապատասխանում Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Համաձայն պայմանագրի 2.1.3 կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը՝ ընդ որում պայմանագրի նույն կետի ա) ենթակետի համաձայն պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված պահանջներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 33-րդ կետի 16-րդ ենթակետի և Պայմանագրի 7.11 կետի, Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ընկերությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊ ընկերության տվյալները ներկայացնելու է լիազոր պետական մարմին:

Պատվիրատուն Կատարողի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի համապատասխան բանկ՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը Պատվիրատուի «ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲ ընկերությունում բացված 220410121291000 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,

ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ծ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

03.04.2019թ.

Էլեկտրոնային Կառավարման Ենթակառուցվածքների Ներդրման Գրասենյակ ՓԲԸ
e-Governance Infrastructure Implementation Unit CJSC